Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՒ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Պ-562-14.04.2020-ՖՎ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

N	ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՆԱԽԱԳԾԻ ԱՅՆ ՄԱՍԸ, ՈՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
1.	ԱԺ պատգամավոր Արտակ Մանուկյան	Նախագծի վերնագիր	Նագագծի վերնագրում «…***լրացում***…»բառը փոխարինել «…***լրացումներ***…»բառով:	Ընդունելի է:	Ընդունվել է:
2.	ԱԺ պատգամավոր Արտակ Մանուկյան	Նախագծի 1-ին հոդվածի մասերի համարակալումներ:	Նախագծի 1-ին հոդվածի մասերի համարակալումը համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի14-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներին՝ հոդվածի մասերի համարները տեքստից բաժանելով միջակետերով:	Ընդունելի է:	Ընդունվել է:
3.	ԱԺ պատգամավոր Արտակ Մանուկյան	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասը վերաշարադրե լհետևյա լխմբագրությամբ՝ «9. Հայաստանի Հանրապետության տարածքում տրամադրված արտարժութային վարկերի և արտարժույթով ներգրավված ավանդների գծով տոկոսագումարների վճարումները՝ վարկառուի կամավանդատուի ցանկությամբ, արտարժութայի նպարտատոմսեր իգծով վճարումները (ներառյալ՝ արժեկտրոնները),	Ընդունելի է:	Ընդունվել է:

			«Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ արտարժույթով արտահայտված արժեթղթի, արտարժույթի կամ տոկոսադրույքի հետ կապված ածանցյալ ֆինանսական գործարքների գծով վճարումները (փոխանցումները), ռեպո պայմանագրերի գծով վճարումները (փոխանցումները) կարողե նիրականացվե լայն արժույթով, որով ստանձնվել է պարտավորությունը, բացառությամբԿենտրոնական բանկի սահմանած դեպքերի:»:		
4.	ԱԺ պատգամավոր Արտակ Մանուկյան	Նախագծում ավելացնել նոր 2-րդ հոդված և 2-րդ հոդվածի համարակալումը դարձնել 3:	Նախագծում լրացնել նոր 2-րդ հոդված՝ **Հոդված 2**. Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ. «Սույն մասը չի սահմանափակում ներդրումային ծառայություններ մատուցող անձանց և ապահովագրական ընկերությունների կողմից «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով նախատեսված ածանցյալ ֆինանսական գործարքների կնքումը՝ իրենց գործունեությունը կարգավորող օրենքներին համապատասխան»:	Ընդունելի է:	Ընդունվել է: